# ՏԵՂԵԿԱՆՔ

## «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում (փաստաթղթային կոդ՝ Կ-276-28.02.2018-ՏՀ-011/0) կատարված լրացման վերաբերյալ

*ՆԱԽԱԳԻԾ*

*Կ-276-28.02.2018-ՏՀ-011/0*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

### «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.3-րդ հոդվածով.

*«Հոդված 14.3. Փոխադարձության հիման վրա Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանվող դրույքաչափը*

1. Փոխադարձության հիման վրա՝ օտարերկրյա պետության քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից ~~, օրենքով սահմանված դրույքաչափերի շրջանակներում, կարող են սահմանվել պետական տուրքի այլ դրույքաչափեր:»:~~ կարող են սահմանվել պետական տուրքի, օրենքով սահմանված առավելագույն դրույքաչափը չգերազանցող, այլ դրույքաչափեր:»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից: